ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

22 մարտի 2011 թվականի N 18-Ա

ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆՄԱՔՐՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԻԱՄՍՅԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին'>> Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ 728 հրամանագրի 1.13-րդ կետի պահանջներով՝ Տավուշի մարզի տարածքում սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման միամսյակի աշխատանքները կազմակերպելու և անցկացնելու նպատակով,

կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Տավուշի մարզում 2011թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը հայտարարել սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ:
2. Միամսյակը կազմակերպելու և աշխատանքների արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով / հավելված 1/:
3. Հաստատել մարզում սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակի իրականացվելիք աշխատանքների ծրագիրը /հավելված 2/:
4. Առաջարկել համայնքների ղեկավարներին՝
1/ Սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով տեղերում ստեղծել համապատասխան հանձնաժողովներ, կազմել և մարզպետարան ներկայացնել միամսյակի աշխատանքների ծրագրերը, ապահովել բնակչության լայն շրջանակների մասնակցությունը:
2/ 2011թ. ապրիլի 23 -ը Տավուշի մարզում հայտարարել համամարզային շաբաթօրյակ:
5. Հանձնաժողովի նախագահին.
1/ Միամսյակն ավարտելուց հետո պատրաստել տեղեկանք՝ մարզպետի խորհրդակցությունում արդյունքներն ամփոփելու համար:
2/ Ներկայացնել լավագույն համայնք, փողոց, բակ, հանգստի գոտի ճանաչվածների ցանկը՝ խրախուսանքի արժանացնելու համար:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

22 մարտի 2011թ.
ք.Իջևան

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ Տավուշի մարզպետի
2011թ. մարտի 22-ի
թիվ 18-Ա կարգադրությամբ

Կ Ա Զ Մ

ՀՀ Տավուշի մարզում սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակը կազմակերպելու և աշխատանքների արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի

Մ.Մխիթարյան	- Նախագահ, ՏԻ և ՀԳՄ ՏԾ ԳՀ վարչության պետ
Վ.Սարգսյան	- Քաղաքաշինության վարչության պետ
Կ.Դովլաթբեկյան	-Առողջապահության և սոց. ապահովության վարչության պետ
Ռ.Մելիքջանյան	-Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա.Սարգսյան	-Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
Մ.Ղալումյան	- Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Մ.Մելքումյան	- Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Ս.Գևորգյան	-Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ

ՀՀ Տավուշի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան

հավելված 2

Հաստատված է
ՀՀ Տավուշի մարզպետի
2011թ. մարտի 22-ի
թիվ 78-Ա կարգադրությամբ

ԾՐԱԳԻՐ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՍԱՆՄԱՔՐՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԻԱՄՍՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

h/h	Միջոցառման անվանումը	Կատարող	Կատարման ժամկետը
1	Մեթոդական ցուցումներ սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների վերաբերյալ	Մ.Մխիթարյան Մ. Ղալումյան Ս. Գևորգյան	1.042011թ.- 1.05.2011թ.
2	Աջակցություն համայնքային հանձնաժողովներին կազմակերպչական աշխատանքներում	Վ.Սարգսյան Ռ.Մելիքջանյան Ա Փաշինյան Կ.Դովլաթբեկյան	1.04.2011թ.- 1.05.2011թ
3	Աջակցություն համայնքային հանձնաժողովներին բարեկարգման, կանաչապատման և սանմաքրման աշխատանքների ընթացքում մասնագիտական օգնություն ցուցաբերելու հարցում	Ռ.Մելիքջանյան Մ.Մելքումյան Մ.Ղալումյան Ս.Գևորգյան	1.04.2011թ.- 1.05.2011թ.
4	Հատուկ պահպանվող /հուշարձաններ, գերեզմաններ և այլն/ տարածքների բարեկարգման աշխատանքների կատարման համար ծրագրերի առաջադրում՝ ՀՄ-ների միջոցով իրականացնելու համար	Մ.Մխիթարյան ՀՄ-ների նախագահներ	մշտական
5	Համայնքների տարածքներով անցնող համայնքային և միջպետական ճանապարհների սանմաքրման աշխատանքների իրականացում	Մ.Մխիթարյան Ա.Սարգսյան Համայնքների ղեկավարներ	մշտական
6	<<Շրջակա միջավայր և բնապահպանություն>> թեմայով ուսումնական հաստատություններում անցկացնել դասընթացներ:	Ա.Փաշինյան Ս.Գևորգյան	1.04.2011թ.- 1.05.2011թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան